

ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բուլղարիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնում պահվող թուրքերեն արխիվային նյութերի մեջ առանձին տեղ են զբաղում 1723—1735 թթ. օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի նվաճման ժամանակաշրջանի վավերագրերը: Նախապես առիթ ենք ունեցել նշելու, որ դրանց մեջ կան նաև տարբեր ուղղություններով առաջացող զինված ուժերի հրամանատարության կողմից սուլթանական արքունիք առաքված զեկուցագրեր, արշավանքին մասնակցող զորամասերի և բերդապահ կայազորների մատակարարումների, ռազմական ծախսերի և զինվորականությանը տրվող ոտճիկների հաշվետվություններ, բնակչությունից գանձվող հարկերի ընդարձակ և համառոտ ցուցակներ և այլ վավերագրեր, որոնց մեջ առկա փաստական նյութը հնարավորություն է տալիս ավելի համակողմանի ուսումնասիրության ենթարկելու մեր ժողովրդի պատմական ճակատադրում բախտորոշ նշանակություն ունեցող այդ ժամանակահատվածի քաղաքական և սոցիալատեսական պատմության, ցարդ դիտական մեկնաբանման շարժանացած որոշ հարցեր<sup>1</sup>:

Այս նյութերի վրա աշխատելիս մեր ուշադրությունը գրավեցին «Թիֆլիսի ֆոնդում» գրանցված 1723 թ. երեք ընդարձակ վավերագրեր, որոնցից առաջինը Թիֆլիսի ուղղությամբ շարժվող օսմանյան զորքերի ընդհանուր հրամանատար, էրզրումի վալի, սարասքար Իբրահիմ փաշայի շտաբին առընթեր, Շարի ատյանում հաստատված մի համաձայնագիր է, երկրորդը՝ այդ համաձայնագրի հիման վրա Արքունի գիվանից սուլթան Ահմեդ 3-րդին ներկայացված զեկուցագիր, իսկ երրորդը սուլթանի պատասխան-հրովարտակը ուղղված Իբրահիմ փաշային<sup>2</sup>:

Համաձայնագիրը կնքված է սարասքար Իբրահիմ փաշայի և Կայդուլիի շրջանի 31 հայկական գյուղերի համայնքների միջև, հիշք. 1135 թ. շաբան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4), առ այն, որ Չըլդըբի էյալեթի Օրուչայա կոչվող բանակատեղում օսմանյան զորքերի հրամանատարությանն են ներկայացել հիշյալ 31 գյուղերի քյադխուղաները և հպատակություն հայտնելով դեպի Թիֆլիս արշավող զորքերի հրամանատարին, ապահովության (աման) խոստում են ստացել նրանից: Այս կամավոր հնազանդության հա-

1 Հ. Փափազյան, Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան գիվանական վավերագրերը, «ՊԲՀ», 1984, № 3, էջ 196—199.

2 Կիրիլ-Մեթոդի ժող. գրադարան (այսուհետև՝ ԿՄԺԳ), ՕԱԿ, № 198/14:

մար նրանց թույլ է տրվել երեք տարի շարունակ օսմանյան իշխանություններին վճարել միայն ստորին շափի զլխահարկ (շիզյա), իսկ երեք տարին լրանալուց հետո, մյուս զիմմի առյաթների նման, պիտի վճարեին եռաստիճան (ստորին, միջին և վերին) շափերով, միաժամանակ կատարելով նաև խարաչ-ի մուվազաֆայի և ուսում-ի կանոնիչյայի պարտավորությունները:

Այս որոշման արձանագրությունը (հուշագր-ի շարի'յյա), Իբրահիմ փաշան ուղարկել է Արքունի զիվան, որտեղ, այդ համայնքներին երեք տարի արքունի հարկերից ազատելու և միայն ստորին շափով շիզյա գանձելու վերաբերյալ, հիշք. 1135 թ. ռամազան ամսի 29-ին (1723 թ. հուլիս 3) կազմվել է ընդարձակ մի զեկուցագիր, խնդրելով այն հաստատել սուլթանական Ֆերմանով: Նույն թվականին հրատարակվել է նշված հրովարտակը, որտեղ համարյա նույնությամբ կրկնված է ներկայացված զեկուցագրի բովանդակությունը:

Պահպանված այս երեք վավերագրերից առաջին երկուսը՝ Շար'ի ատյանում կազմված արձանագրությունն ու Արքունի զիվանի զեկուցագիրը— բնագրեր են, իսկ Ֆերմանը՝ այն, այսպես կոչված, սևագիր օրինակն է, որի հիման վրա գրվել է թուղթայով զարդարուն Ֆերմանն ու ուղարկվել Իբրահիմ փաշային առ ի զործագրություն: Հատկանշական է, որ բնույթով տարբեր այս փաստաթղթերը, վերաբերելով նույն հարցին, Արքունի զիվանում պահպանվել են միատեղ և ներկայումս Կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի Արևելյան բաժնում գրանցված են նույն համարի ներքո:

Կաշգուիլիի նահիան կամ մահալը համապատասխանում է պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի Աշոցք գավառին, որի Սեֆյան Իրանի տիրապետության շրջանի վարչական բաժանմամբ ենթարկվում էր Արևելյան Վրաստանի վալիությանը, հանդիսանալով Թուրքիային սահմանակից գավառներից մեկը: (Ներկայումս Հայաստանի Հանրապետության Աշոցքի շրջան):

Նախորդ ուսումնասիրություններում վերլուծելով 1724—1735 թթ. Անդրրկովկասի ռազմակալման տարիներին օսմանյան զինվորական իշխանությունների կողմից կիրառվող հարկային քաղաքականության բնույթը քաղաքացու վավերագրերը, նշել ենք, որ դրանք մեծ մասամբ վկայում են սկզբնապես ցուցաբերվող մեղմ ու սիրաշահող վերաբերմունքի մասին, որը նպատակ ուներ դյուրացնելու այդ երկրամասի արագ նվաճումը, որից հետո արդեն անցկացվող հաճախակի մարդահամարների, հատկապես բնակչության և եկամտաբեր ստացվածքների ու մուկաթիանների հաշվառման և վերստուգման (չորլամա) փաստաթղթերն ու համառոտ և ընդարձակ մատյանները (զեֆթեր) պատմում են հարկերի ու տուրքերի, հատկապես քրիստոնյաներից գանձվող զլխահարկի (զիշյա), բազմապատիկ շափերով ավելացման և բնակչության սանձարձակ կողոպուտի ու հարստահարման մասին<sup>3</sup>:

Օսմանյան զորաբանակների, նվաճված երկրներում ծավալված ավերի ու ավարի, համատարած կողոպուտի և բնակչության զանգվածային գերեվա-

3 Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 440—446. տե՛ս նաև նույնի՝ Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժող. գրադարանի օսմանյան զիվանական վավերագրերը, էջ 197—199:

րության բազում դեպքերի ականատես և ականջալուր սահմանամերձ այս շրջանի հայ ազգաբնակչությունը, տեղեկանալով սկսվող արշավանքի մասին, շտապել է կանխել սպառնացող վտանգը: Այդ իրադարձության մասնավորապես նկարագրությունը պարունակող այս վավերագրերը թույլ են տալիս ենթադրելու, որ սկզբնական շրջանում այդ նրանց հաջողվել է: Սուլթանի հրովարտակում շարադրված հրահանգներում գրեկորված է օսմանյան իշխանությունների գոհունակությունը, որից ելնելով, կարգադրված է մեղմ և զգուշավոր լինել նրանց նկատմամբ, որպեսզի մյուս վայրերի ժողովուրդը ևս հետևի նրանց օրինակին:

Թե ինչ չափով են իրագործվել այդ հրահանգները, մեզ ոչինչ հայտնի չէ: 1724—27 թթ. Հայաստանում և Վրաստանում թուրք նվաճողներին ցույց տրված ուժեղ դիմադրությունը, Արարատյան երկրում, Երևանում, Սյունիքում, Արցախում և այլ վայրերում մղված հերոսական կռիվները վկայում են այն մասին, որ Կայզուլիի բնակիչների նախաձեռնությունը ոչ միայն օրինակ չի հանդիսացել, այլ բնդհակառակը, որտեղ որ հնարավոր է եղել կազմակերպված հանդես գալ, ժողովուրդը կատաղի դիմադրություն է ցույց տվել, շնավատալով ապահովության (աման) մասին օսմանյան իշխանությունների կողմից կատարվող հայտարարություններին ու հավաստիացումներին:

Մենք չգիտենք նաև թե ինչպիսին է եղել այդ զուտ հայաբնակ շրջանի բնակչության վիճակը օսմանյան ռազմակայման հաջորդ տարիներին: Կայզուլիի վերաբերյալ սկզբնաղբյուրների հետագա տեղեկությունները վերաբերում են 1735 թվականին, երբ իրանական զինված ուժերը, որոնց միացել էին նաև Արցախի հայ մելիքների և Արարատյան երկրի հայության զինված ջոկատները, Նադիր-կուլի խանի գլխավորությամբ Եզվարդի մոտ պարտության մատնելով Արզուլա-փաշայի հրամանատարության տակ կովոդ օսմանյան զորքերին, անցան սահմանն ու գնացին պաշարելու Ղարսի բերդը<sup>4</sup>:

Նադիրի պալատական պատմիչներ Մուհամադ-Քյազիմի և Միրզա-Մուհամադ Մեհդի-խանի վկայությամբ, Ղարսի պաշարման օրերին Նադիրի զորքերը ասպատակ էին սփռել շրջակա գավառներում հասնելով մինչև էրզրում, Կաղզվան և Բայազետ<sup>5</sup>: Ղարսից վերադառնալուց հետո, երբ Նադիրը պատրաստվում էր արշավել Թիֆլիս, նա իր զորքերին կարգադրել է ասպատակել նաև Տայոց և Գուգարաց աշխարհի շրջանները: Պատմելով այս մասին, Աբրահամ Կրետացին գրում է. «Այլ և ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնալր ի Ղարս՝ յաջ և յահեակ, զմի կողմն ի վերա Պայազիտո՞ւ կրկին, և զմիան կողմն ի վերա Կաղզուանայ և ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկը և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թէղուպոլսոյ: Եւ գերեցին զՆարիմանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու

<sup>4</sup> «Հայ ժող. պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 183—184:

محمد کاظم، نامه عالم آرای نادری، جلد اول، مسکو، ۱۹۶۰، ص ۳۱۴-۳۱۶  
 ۴ محمد مهدی خان استادا بادی، تاریخ نادری، تبریز، ۱۲۸۴، ص ۸۹

և զՂալիղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ բշեցին զայր և զկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով ԶՌ (6000), որպէս և լսեմք»<sup>6</sup>:

Այնուհետև Կրետացին ավելի մանրամասն պատմում է Քիֆլիսի և Երեւմանի հայութեան գերեզման մասին, նշելով իր ջանքերը, որոնց շնորհիվ հնարավոր է եղել 3000 թուման կանխիկ դրամ և 3000 սոմար ցորեն հատուցելով կանխել Քիֆլիսեցիների արտորը: Իսկ Երևանից 300 տուն բռնի ուղարկվել է, մյուս բնակիչներից փոխադրական միջոցներ ու այլ օգնություն հավաքելով և տալով մեկնողներին<sup>7</sup>: Ինչ վերաբերում է Կալուրի բնակչության արտորին, ապա ինչպես երևում է այն իրագործվել է ամենայն խստութեամբ, որք տեղի է ունեցել Կրետացու Քիֆլիսում նազիրին ներկայանալուց բավական առաջ և մեծ արագությամբ:

1735—36 թթ. նազիրի հրահանգով Անդրկովկասից բշված բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում նաև դաշտային Ղարաբաղում, Բարգուշատում և այլուր բնակվող ադրբեջանական այն ցեղերը, որոնք օսմանյան սաղմակալման շրջանում հնազանդվել էին նվաճողներին և նույնիսկ համագործակցել նրանց հետ, ճնշելու Արցախում և Սյունիքում մարտնչող հայութեանը: Գեպի Խորասան արտորվեցին Օթուզիբի (երեսուն երկու), Սարուշալի և Զիվանշիր կոչվող ցեղային միավորումների մեջ մտնող բազմաթիվ ցեղախմբեր (այժաղներ), ինչպես նաև Բարգուշատի Ամիրանբարի, Քարիրլու և այլ ադրբեջանական համայնքներ<sup>8</sup>: Ուստի անհավանական չէ, որ Կալուրի բնակչության, փաստորեն, հարկադրյալ անձնատվության և Իբրահիմ փաշային հնազանդություն հայտնելու հանգամանքը ևս հիմք հանդիսացած լինի այս անողոր բռնի տեղահանությանն ու արտորին:

XIX դ. վերջերի գրական-հասարակական գործիչ Ն. Հ. Գորոյանը, իրանահայ համայնքների պատմությանը նվիրված աշխատության մեջ, խոսելով նազիրի օրոք տեղի ունեցած այս բռնի տեղահանությունների մասին, հաստատում է զանգվածային արտորները Խորասան, տողատակում տալով հետևյալ ծանոթագրությունը. «Թեև այս գաղթականությանց հիշատակը Զուղայի հայոց ողբերգական երգերի մեջ պահված է, սակայն ոչ մեկ գրիչ որևէ տեղեկություն չէ թողեր, զեթ ևս որևէ բան չեմ գիտեր այս բազմաթիվ հայոց ճակատագրի մասին»<sup>9</sup>:

Իրողությունն այն է, որ այս արտորից հետո Խորասանում հայարնակ կենտրոններ չտեղծվեցին, ինչպես այդ եղավ XVII դ. սկզբի Շահ Աբասի հրամանով կատարված մեծ գաղթից հետո կենտրոնական Իրանի որոշ շրջաններում: Այդ նշանակում է, որ կորուստներ տալով, ցաք ու ցրիվ տեղ հասած հայությունը, ենթարկվելով բռնի հավատափոխության, ձուլվել է ու անհետացել:

Հրապարակվող թուրքերեն վավերագրերը վերաբերելով մեր հանրապետության ծայրամասային շրջաններից մեկի ոչ այնքան հեռու անցյալին, գալիս են հաստատելու ողբերգական այս իրագործություններին անմիջապես նախորդող ժամանակներում, պատմական Աշոցքի գերազանցապես հայարնակ լինելու փաստը: Նրանք միաժամանակ որոշակի գիտական հետա-

6 Абраам Кретацу, Повествование, Ереван, 1973, հայ. բնագիր, էջ 67:

7 Նույն տեղում, էջ 71:

8 Ան, Երկերի ժողովածու, հ. III, գիրք Բ, Երևան, 1973, էջ 364:

9 Ն. Հ. Գորոյան, Պարսկաստանի հայերը, ԹԼՀրան, 1968, էջ 257:

բրբրությունն են ներկայացնում որպես Օսմանյան կայսրության նվաճողական նկրտումներն ու նվաճված վայրերում կիրառվող հարկային քաղաքականության բնույթը բացահայտող հավաստի պաշտոնական փաստաթղթեր:

Ստորև հրապարակում ենք միայն Շար'ի ատյանում գրի առնված համաձայնագրի (հոջջաթ) և սուլթանական հրովարտակի հայերեն թարգմանությունն ու թուրքերեն բնագրերը, դուրս թողնելով Արքունի դիվանի զեկուցագիրը, որի բովանդակությունը, ինչպես ասվեց, համարյա նույնությամբ կրկնված է հրապարակվող հրովարտակում:

## I

Հաստատում եմ ինչ գրված է այստեղ:

Գրեց Աստոն փառփի Խոաշ տնանկ, Թիֆլիսի բանակի կազի, Սեյիդ Մուհամմադը, Վերին կարգադրությամբ:

—Կնիբ—

Սույն գրության պատճառը հետևյալն է.

Ներկայումս բարձրագույն հրամանով Թիֆլիսի բերդի գրավման հրահանգ ստացած հաղթական զինվորների հրամանատար, սույն արձանագրության առիթ հանդիսացող, աստփաշնորհ վեզիր, էրզրումի մուհաֆիզ, նորին սրբություն, գերերջանիկ սիլահդար Իբրահիմ փաշան,—Թող Աստված բարեկեցություն շնորհի նրան,—հիշյալ բերդից շորս օրվա ճանապարհի վրա գտնվող Չըլդերի էյալեթի Օրուշայա կոչվող վայրում կանգ առնելուց հետո, եպարքոսական ատյան հաստատեց, որտեղ լուսավոր Շար'ի նիստին ներկայացան Թիֆլիսի բերդին ենթակա վայրերից, Կաչուլիի նահիայում գտնվող՝

Աղբուլաղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ավագի որդի Բարին,  
 Զիգարաշեն կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ուլիբեկի որդի Թամազը,  
 Թարքաշ գյուղի բյաղխուղա՝ Մխիի որդի Մինասը,  
 Վերին Օրթուլի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Գրիգորի որդի Անանիան,  
 Ներքին Օրթուլի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Շահնազարի որդի Օսեփը,  
 Արզըլուղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Նարիմանի որդի Բարին,  
 Ազգանշի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Պողոսի որդի Սարգիսը,  
 Խանբուլաղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Վարդանի որդի Օհանը,  
 Մելիք կոչվող գյուղի բյաղխուղա՝ Մելիքի որդի Մըսըրը,  
 Կուտի-շայ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Բաշուի որդի Ասլանը,  
 Աուկաս կոչվող գյուղի բյաղխուղա՝ Զանիբեկի որդի Շահրիմանը,  
 Օբուսթար կոչվող գյուղի բյաղխուղա՝ Առաքելի որդի Սալիմը,  
 Դավազյոզ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Ավանեսի որդի Արապյոզը,  
 Ալահվերդի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Մխիթարի որդի Դանիելը,  
 Արզըլուղ կոչվող գյուղի բյաղխուղա՝ Գրիգորի որդի Էմինը,  
 Քեշիշթափա կոչվող գյուղի բյաղխուղա՝ Տեր Հակոբի որդի Գրիգորը,  
 Կազանչի կոչվող գյուղի բյաղխուղա՝ Խաչատուրի որդի Ավազը  
 և ավագներից Կիրակոսի որդի Բարիջանը,

Վալիքյանդ կոշվող գյուղի քյաղխուղա՝ Վալիդի որդի Ղազարը,  
 Մըսըրքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Դամիրի որդի Սարգիսը,  
 Սարգիս կոշվող գյուղի քյաղխուղա՝ Կոստանի որդի Արութինը,  
 Թաթոս կոշվող գյուղի քյաղխուղա՝ Թաթոսի որդի Օսեփը,  
 Դադրասքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Օսեփի որդի Կիրակոսը,  
 Քեշիշքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Քեշիշի որդի Ներսեսը,  
 Վերին Ղվարղվար կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղվարղվարի որդի  
 Սարգիսը,

Ներքին Ղվարղվար կոշվող գյուղի քյաղխուղա՝ Մարտիրոսի որդի  
 Շահրիմանը,

Քուսիքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Մարտիրոսի որդի Գրիգորը,  
 Գուրզլի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղորջանի որդի Յավրուն,  
 Ղազիքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Սարբիշանի որդի Շահիշանը,  
 Բուլաղքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Ղարագյուղի որդի  
 Հախնազարը,

Սուֆի կոշվող գյուղի քյաղխուղա՝ Գասպարի որդի Մեհրաբը և  
 Բեկքյանդի կոշվող գյուղի քյաղխուղա Թորոսի որդի Սարգիսը, նշված  
 Կահիայի վերոհիշյալ գյուղերի բնակիչների և առյաթների բնդհանուր լիազո-  
 բությամբ, վերոհիշյալ նորին սրբություն վեղիրից ապահովություն (աման)  
 խնդրելով, պարտավորվեցին, սույն օրհնյալ թվականից սկսած, երեք տա-  
 րի շարունակ, բոլոր ջիզայի ենթակաները, իրենց ջիզան ստորին շափով,  
 մճարեն թագավորական իշխանության կողմից նշանակված ջիզա գանձող-  
 ներին, իսկ երեք տարին լրանալուց հետո, վճարումները կատարեն երեք-  
 դասյան սկզբունքով և իրենց ձեռքում գտնվող հողերի համար, նշանակված  
 դարթիներին ու հարթիներին խարաջ-ի մուվազղաֆա և ուսում-ի կանու-  
 նիյա վճարելով և թագավորական իշխանության ներքո ապահովություն վա-  
 չելելով, շարունակեն ապրել իրենց նախկին գյուղերում: Իսկ նրանց պատ-  
 կանող հողերը, առաջվա նման մնան իրենց ձեռքում, այն պայմանով, որ  
 հողային և գիմմիության հարկերը հատուցեն այն անձնավորությանը, որը  
 իշխանության կողմից նշանակված կլինի այդ հարկերը հավաքողի պաշ-  
 տոնում:

Հիշյալ նորին սրբություն վեղիրը, ըստ վերոգրյալի, թագավորական հո-  
 վանավորության ներքո գտնվելու պայմանով, նրանց ապահովություն  
 (աման) շնորհեց և այլ գիմմիների դասի շարքն անցկացնելու վերաբերյալ  
 իրենց իսկ խնդրանքով արձանագրվեց:

Գրվեց 1135 թ. մեծազոր շա՛բան ամսի 29-ին (1723 թ. հունիս 4):

Իրողության վկաներ.

Ներկայումս Ղարսի մուհաֆիզ, մեծապատիվ Մուստաֆա փաշա,  
 Ալաղչոզ անունով հայտնի, Յուսուֆի որդի, մեծապատիվ Ահմադ-աղա,  
 Բարձրագույն դասն զոնապանների գլխավորը,  
 Միրալայ՝ Շահնավազղաղե Սուլեյման,  
 Էրզրումի միրալայ՝ Մուստաֆա-բեկ,  
 Բայբուրդի միրալայ՝ Արղուլլա-աղա,  
 Էրզինջանի միրալայ՝ Սուլեյման-աղա,  
 Քելբիթի միրալայ՝ Օսման-աղա,

Միրալայ՝ Հասան-աղա,  
Իբրահիմի որդի, միրալայ՝ Օմար-աղա,  
Իսպիրի միրալայ՝ Մահմուդ-աղա,  
Դերջանի միրալայ՝ Օմար-աղա:

Հրամայված է սույն շարիաթական վճիռը արձանագրել և պահել գլխավոր հաշվապահությունում:

27 ասնազանի: 1135 թ. (1723 թ. հուլիս 1):

## II

Թիֆլիսի ուղղությամբ սարասքար նշանակված, էրզրումի վալի, Իբրահիմ փաշային՝ հրաման.

Դու, որ հիշյալ վեզիրն ես, հրամանատարության տակ գտնվող իսլամական հաղթական զինվորների հետ, հրահանգված ուղղությամբ շարժվելով և ուղևորվելով, երբ հասել ես Թիֆլիսի կողմերը, Թիֆլիսին ենթակա վայրերից, Կաչուլի կոչվող նահիայի ուսթաններն իրենք և նրանց լիազորները, գյուղերի քյադխուղաներն ու ավագները (կոչարեկիներ) եկել են քեզ ընդառաջ և մեր արքայական բարեշնորհությունից մեղմություն և ապահովություն (խաթի՛ման) խնդրելով, մեր բարձր տերության հովանու տակ ապաստանելու ցանկությամբ, ընդունել և հանձն են առել մեր զիմմիներն ու ուսթաները լինել: Որով և, սույն օրհնյալ տարվանից սկսած, մինչև երեք տարի, օրենքով ջիզյայի ենթակա եղողները, իրենց ուսթանության պարտքը հանգիստացող օրինական ջիզյան, բոլորը միահավասար, ստորին շափով պետք է վճարեն նրանց, ովքեր նշանակված կլինեն այն զանձելու: Իսկ երեք տարին լրանալուց հետո պարտավորվում են վճարել երեքդասյան սկզբունքով՝ ըստ կարողության, և իրենց ձեռքում գտնվող հողերի համար էլ օրինական և ուսթաներին վերաբերող մյուս տուրքերը (ուսուումաթ-ի կանունիյա և ոուսուում-ի ուսիյաթ) ամեն տարի պետք է հատուցեն զարբիներին: Այս պայմանով, նրանք բոլորը իրենց կամքով և հոժարությամբ, սրբազան շարի ներկայությամբ, օրինավոր վճռագիր (հոջջաթ-ի շարիյա) են տվել, որն ուղարկվել է մեր երջանկության դուռը, և քո կողմից ևս այդ մասին գեկուցվել է ու տեղեկացվել:

Քանի որ, վերոհիշյալ Կաչուլիի նահիայի ժողովուրդն ու ուսթաները մեր բարձր տերության հովանավորությանն են ապավինել և հանձն են առել զառնալ մեր զիմմիներն ու ուսթաները, ուստի, մեր արքայական բարի սովորության համաձայն, նրանց վերցնում ենք մեր հովանու ներքո, նրանց վրա տարածելով մեր խնամքն ու հոգատարությունը: Մեր գթության շվարում և արքայական ափի մեջ նրանց պատսպարումն ու հանգիստը, մեր արքայական գործերի և թագավորական պահանջների թելադրանքն է: Մանավանդ, որ հիշյալ նահիայի ժողովուրդը առաջինն է, որ առանց տատանվելու ապաստանել է մեր արքայական ողորմածությանը և զիմմիություն ու ուսթանություն են ընդունել և մյուսներից կանուխ է շտապել անցնել մեր հավերժական տերության հնազանդության և հպատակության ներքո: Ի տրիտուր նրանց կողմից դրսևորված այս հնազանդությանն ու հպատակությանը, ներկայումս իրենց ձեռքում գտնվող մուլքերն ու հողերը պետք է թողնել նրանց ձեռքում և հանձն առած ստորին շափի ջիզյայից բացի,

երեք տարի շարունակ նրանք հողային հարկից և ուսյաթներից զանձվող այլ օրինական տուրքերից (ոուսումաթ-ի կանունիչյա) ազատված են համարվում, և մինչև նշված ժամկետի լրանալը միայն տարին մեկ անգամ ստորին շափով իրենց ջիզյան պիտի հատուցեն:

Սակայն դու, որ հիշյալ վեզիրն ես և այդ կողմերի հանրության բոլոր գործերը ամբողջապես քո աստվածընկալ կամքին է հանձնված, հիշյալ նահիայի ուսյաթների տված օրինավոր համաձայնագրում արձանագրված հանձնառության համաձայն, սույն օրհնյալ տարում նրանցից պահանջվող օրինական ջիզյայի գանձումը նախընտրում ենք քեզ հանձնարարել, նպատակահարմար շղթնելով ուրիշ մեկին գործուղել, քանի որ հիշյալ նահիան նոր միայն գրավված մի երկիր է, իսկ ուսյաթները, վախից, դեռևս իրենց խնդիրքում վարանոտ:

Արդ, քանի որ նրանց ջիզյայի գանձման գործի կարգավորումը, անհրաժեշտաբար քեզ վրա է դրված, վերը նշված ձևով, ապահովության (խոթիման) քղանցքին ապավինելով, մեր Բարձր տերությունից ապաստան խնդրած, Թիֆլիսին ենթակա Կայզուլիի նահիայի ժողովրդի մեր կողմը ուղարկած վերոհիշյալ օրինական համաձայնագրում գրված կարգով, հատուցումը հանձն առած ստորին շափի ջիզյաների գանձումը սկսել 1135 թվականի սկզբից և ըստ իրենց խոստման, հիշյալ ուսյաթների օրինական ջիզյան մինչև նշված ժամանակի ավարտը, իրենց հանձնառության համաձայն, երեք տարի շարունակ գանձել համահավասար, ստորին շափով, իսկ երեք տարին լրանալուց և որոշված ժամանակը ավարտվելուց հետո, օրինական կարգով նրանց վզին դրված ջիզյան երեքդասյան կարգով պետք է նշանակվի և ըստ կարողության գանձվի: Հրամայված է, նշված ժամկետը դեռ ավարտին չհասած, հանձնառության հակառակ, ստորին շափի ջիզյայից ավելի ոչ մի ակշե չպահանջել:

Կարևոր է նաև, որ հիշյալ նահիայի ժողովուրդը, բոլոր տեսակի ոտընդդույթուններից, ճնշումներից և ապօրինություններից պահպանված լինի, որի համար էլ նրանց ջիզյաները գանձելու համար անհրաժեշտ շինք համարում առանձին ջիզյա գանձող (ջիզյադար) նշանակել և առայժմ ջիզյայի թղթեր ևս չենք ուղարկում: Ստանալով սույն մեծաշուք հրամանագիրը, հիշյալ ուսյաթներից 1135 թ. ստացվելիք ստորին շափի ջիզյան գանձելու համար, քո կողմից և անձամբ քո հայեցողությամբ, ուսյաթներին խնամող, շափավոր վստահելի և ինքնուրույն մարդիկ կնշանակես, և եթե հիշյալ նահիայում ջիզյայից ազատելու առիթ լինի, որևէ հիվանդությամբ հիվանդներից բացի, օրենքով որքան ջիզյայի ենթակա զիմմի ուսյաթներ կան, իրենց հանձնառության համաձայն, յուրաքանչյուրից երկուսուկես զուրուշ, համահավասար, ստորին շափով, օրինական ջիզյան ապահովաբար գանձիր և պետական(միրի)թերթիկների փոխարեն, ջիզյան վճարած լինելու մասին վկայող, քո իսկ կնիքով կնքված, թղթեր հանձնիր, և երբ այս ձևով ջիզյաները գանձես, հավաքված ջիզյան, առանց մի ստակը պակասելու կամ պահելու, ճշտությամբ գրանցելուց և լրացնելուց հետո, կնքված և ստորագրված մատյանը մեր երջանկության դուռը կուղարկես: Յուրաքանչյուր անձից ջիզյայի դիմաց գանձվելիք երկուս ու կես զուրուշը լրիվ հատուցելուց հետո, հարկահավաքության, գրագրության (թահսիլդարիչյա և քյաթիբիչյա) անվան տակ, կամ այլ պատուվակով, ոչ մի ակշե և ոչ մեկ ստակ չվերցնես:



և ուրիշ ոչ ոքի ևս թույլ շտապ վերցնել և խնամք տանես նրանց ապահովությանն ու հովանավորվածությունը:

Հիշյալ նահիայի ուսյաթները, բոլորից առաջ, մեր Բարձր տերությունը հնազանդություն և հպատակություն հայտնելով և մեր հաստատուն հպատակությանն ու ապահովությանը ձգտելով, իրենց բարի վարքն են դրսևորել, հետևաբար նրանց նկատմամբ մեր արքայական առատաբուխ, բարձր ողորմածությունն ու թաղավորական գթությունը ցուցաբերելով, 35 թվականից սկսած անընդմեջ, մինչև երեք տարի, հանձն առած ստորին շափի ջիզյայից բացի նրանց ազատում ենք հողային հարկից և ուսյաթներից գանձվող այլ օրինական տուրքերից (մուաֆ և մասալլամ ենք դարձնում): Այս ազատության պայմանների (շրուֆ-ի մուաֆիլյաթ) պահպանումը խիստ կարևոր է: Եվ դու, որ հիշյալ վեզիրն ևս, այդ կողմերի բոլոր հասարակաց գործերի մեջ ուսյաթների և ժողովրդի գործերի խաղաղ ընթացքը կամ անհանգիստ վիճակը, ընդհանրապես և ամբողջությամբ թո անօրինությանն է վերապահված: Հիշյալ նահիայի ժողովրդին վերաբերող բոլոր գործերի տնօրինումը քեզանից է պահանջվում: Նրանց հովանավորության և հարկերից ազատ լինելու (մուաֆիլյաթ) վերաբերյալ մեր արքայական բարեհոգության մասին նրանց փոքրերին ու մեծերին, ստորին և վերին խավի մարդկանց տեղեկացրեք և հայտարարեք, որ այսուհետև նրանք մեր արքայական հովանու և շուքի ներքո ամեն կողմից պաշտպանված պիտի լինեն: Նախապես և ներկայումս էլ իրենց տիրապետության տակ գտնվող մուլքերն ու հողերը թողնում եմ իրենց ձեռքում:

Ամենակարող աստծու օգնությամբ, կարևորագույն գործերը կարգավորելով և բոլոր դեպքերում խեղճերին և կարոտյալներին հովանավորելով ու պաշտպանելով, մեր արքայական մեծազոր փառքի հավերժացման և թաղավորական կենաց և տերության հարատևման համար բարի աղոթքների առաքման համար հոգալու մասին, մեծաշուք հրամանս հրապարակվեց: Որով հրամայում եմ:

1135 թ. ումազանի 29-ին (1723 թ. հուլիս 3):

Հաշվապահությունից:

Կարգադրված է հրամանագիր տալ:

1135 թ. ումազանի 29-ին (1723 թ. հուլիս 3)

(Ստորագրություն)

Բացատրված կարգով գլխավոր հաշվապահությունից, ջիզյայի գրասենյակին հաշվեցուցակ տալու համար, գլխավոր հաշվապահությունում արձանագրելով, այլ գրությամբ գրի առնել:

الامر حبیباً حرر فیہ نطقه الفقیر اللہ عزّ شأنه  
 السيد محمد القاضي باردو تفلیس  
 من قبل امر من له الامر - مهر -

سبب تحریر کتاب بودر که حالا با فرمان عالی تفلیس قلعہ سی  
 تسخیرینہ مأمور جنود منصورہ نیک سرداری اولان اشبویا عث الوثیقہ  
 وزیر آصف رسوم محافظ ارض روم سعادتلو سلحدار ابراہیم پاشا یسر  
 اللہ بالخیر ما ینشاء حضرتلری قلعہ مزبورہ یدہ درت مرحلہ قریب چلدیر  
 ایالتقدن اوروجایہ نام محلہ نزول ایدوب ترتیب ایلدک لری دیوان  
 آصفیلرندہ عقد اولغان مجلس شرع انورده قلعہ تفلیس نواحیلرندن  
 قیفیللی ناحیہ سندہ واقع آغ بولاقی نام قریہ کتخداسی بابی ولد اوک  
 جکرشین نام قریہ کتخداسی تاماس ولد اولی بیک و ترکیش قریہ سی  
 کتخداسی مناس ولد مخی و اورتولی علوی نام قریہ کتخداسی انانیہ  
 ولد کرکور و اورتولی سفلی نام قریہ کتخداسی اوسیب ولد شاہ نزار  
 و قزل قوج نام قریہ کتخداسی بری ولد نرمان و قزنجی نام قریہ سی  
 کتخداسی سرکز ولد بوغوس خان بولاقی نام قریہ کتخداسی اوہان ولد  
 وارتان و ملک نام قریہ کتخداسی مصر ولد ملک و قوری چای نام قریہ  
 کتخداسی اصلان ولد باجلو غوکاس نام قریہ کتخداسی شرمان ولد جان  
 بیک و اوکوستان نام قریہ کتخداسی سلیم ولد اراکیل دوہ کوز نام  
 قریہ کتخداسی قرہ کوز ولد اوانیس و اللہ ویردی نام قریہ کتخداسی  
 دانیل ولد مختار قزل قوج نام قریہ کتخداسی امین ولد کرکور کشیش  
 دیہ نام قریہ کتخداسی کرکور ولد یاغوب کشیش و قزنجلی نام قریہ  
 کتخداسی عزیز ولد خجادر و اختیارلرندن بابیجان ولد کراکوس والسی

կندی نام قریه کتخداسی قزر ولد ولید و مصر کندی نام قریه کتخداسی  
سرکز ولد دمر و سرکز نام قریه کتخداسی اروتین ولد کستان و تاتوی  
نام قریه کتخداسی و سبب ولد تاتوس و ددرس کندی نام قریه کتخداسی  
کراکوس ولد اوسیب و کشیش کندی نام قریه کتخداسی نورسز ولد کشیش  
و قورقوری علوی نام قریه کتخداسی سرکز ولد قورقور قرقسغلی نام  
قریه کتخداسی شرمان ولد ماردورس کوسی کندی نام قریه کتخداسی  
کرکور ولد مازدرس دورزلی نام قریه کتخداسی یاورو ولد قورجان  
و قاضی کندی نام قریه کتخداسی شاهبجان ولد سریبجان و بولاق کندی  
نام قریه کتخداسی حق نظر ولد قره کوز و صوفی نام قریه کتخداسی  
مهراب ولد کسبار و بیک کندی نام قریه کتخداسی سرکز ولد طوروش  
ناحیه مزبورده واقع اولان سالف الذکر قرا احالیلری رعایا لرینه  
وکالتی عابهلری حسبیله وزیر مشارالیه حضرتلرندن استیمان ایدوب  
اشبوسنه مبارکهدن اوچ سنه یه دکین مستحق جزیه اولنلری مزادنی جزیه  
طرف پادشاهی دن جزیه جبا یتنه مأمور اولنلره ادا ایدوب اوچ سنه  
تکمیلندن صکره اصناف ثلثه اعتباریله تسلیم جزیه ایلد کمزدن صکره  
یدلر مزده ایقا اولنان اراضیلریمزک خراج موظفه و رسوم قسانونیه  
اوزولری مزه نصب اولنان ضابط و حاکم لری مزه ادا ایدوب زیر حکومت  
پادشاهیده محمی اولمق اوزره قدیمی قریه لر نه ساکنلر اولوب اراضی  
لری کما فی الاول کندی لره ایقا اولنوب خراج ارض و خراج ذمتلرینی  
امر من له الامر طرفندن جبا یتنه مأمور اولنلره ادا و تسلیم ایتمک  
شرطیله وزیر مشارالیه حضرتلری دخی وجه محرر اوزره زیر حمایت یه باد  
شاهیده محمی اولمق شرطیله استیمانلرینی قبول ایدوب و سائز اهل  
ذمت زمره سنه انحال ایتمکین ما هو الواقع یا لطلب کتب اولندی •  
تحریر آفی یوم التاسع والعشیرین من شهر شعبان المعظم سنه خمس  
و ثلاثین و مایه و الف •

## شهود النسال

عزتلیو مصطفی پاشا محافظ قارص حالیا  
 عزتلیو احمد آغا ابن یوسف الشهیر بالاکوز سربوآبان درگاه عالی  
 هینوا ززاده سلیمان آغا میرالای  
 مصطفی بیک میرالای ارضروم  
 عبدالله آغا میرالای بایبورد  
 سلیمان آغا میرالای ارزنجان  
 عثمان آغا میرالای کلکیت  
 حسن آغا میرالای  
 عمر آغا بن ابراهیم میرالای  
 محمود آغا میرالای اسبر  
 عمر آغا میرالای درجان

اشبو حجت شرعیہ باش محاسبہ یہ قید و حفظ اولنمق بیورلدی

۲۷ رمضان سنہ ۱۱۳۵

ارض روم والیسی اولوب تغلیسی جانبینده سرعسکر اولان وزیر  
 ابراهیم پاشایہ حکم کہ سنکی وزیر مشارالیه سن مقیتکه ما مور اولان  
 جنود منصوره اسلامیه ایلہ صوب ما مورہ حرکت و عزیمت اہلیوب تغلیسی  
 جانبینہ واردوقده تغلیسی مضافاتندن قیفولی ناحیہ سنک اہالی  
 و رعایاسی طرفلرندن اصل و وکیللری و قراکندالری وقوجہ باشیلری  
 طرفکہ کلوب عواطف علیہ پادشاہانہ مدن استقطاف و استیمان و زیر  
 سایہ دولت علیہم التجا ایلہ ذمت و رعیتی تعہد و قبول ایتملریلہ

اشبهو سنة مباركه دن اوج سنه يهد دكين شرعا جزيه يه مستحق اولنلر  
ذمت رعيتلرينه ايجاب ايدن جزيه شرعيه لرين جبايته مأمورا ولنلره  
على السويه ادنا اعتباريله ادا و تسليم ايدوب اوج سنه تكميل او  
لندقدن صكره اصناف ثلثه اعتباريله تحميل و استحقا قلرينه كورفا ادا  
و يدلرينده ابقا قلنان اراضيلرينك نخي ترتيب ايدن رسومات قانو  
نيه لرين و سائر رسوم رعيتلرين سنه بسنه ضابطلرينه ادا اهتملري  
شرطيله حضور شرع شريفده طوعاً و رضا جمله سي حجة شرعيه و يوروب  
ويوردكلى حجة شرعيه در سعادتتمه ارسال و سنك نخي طرفكدن عرض  
و اعلام اولمقين مارالذكر قيفغولى ناحيه سنك اهالى و رعاياسى زير  
جناح دولت عليهم التجايله ذمت و رعيتي قبول ايلدكلرينه بنا  
مقتضى ديدنه مستحسنه خديوانهم اوزره خفض جناح رافت و شفقت و  
بسط بساط نوازش و ايتعمالتايله زير حماى حمايته النوب سايبه  
رحمت و ايه پادشاهانهمده استظلال و استراحت اوزره اولملرى اقتضا  
مطالب خديوانه و منتهاي مآرب شاهانهمده اولوب و الخصص ناحيه  
مزبوره اهاليلرى بلا تردد پناه آور امان خسرواندم اولملرى قبول  
ذمت و رعيت ايلمكده جمله يه مسابقت و سائرندن مقدم دولت عليهم سرمد  
الاستمراره مطاوعت و متابعتده ابراز جوهر مسارعت ايلدكلرى چون  
ظهوره كلان بو حسن اطاعت و متابعتلى مقابله سنده تصرفلرنده اولان  
املاك و اراضى يدلرنده ابقا و اداسنى متمسهد اولندقلرى ادنا جزيه  
سندن ماعدا متوالسيه اوج سنه يه دك خراج اراضى و سائر رسومات  
قانونيه رعيتدن معاف و مسلم قيلنوب فقط مدت مرقوم انقضا  
سنه دكين سنه ده بر دفعه ادنا اعتباريله جزيه لرى جبايت ايتدر  
لك مقتضى اولوب لكن سئكى وزير مشاراليه سن او حوالينك كافه امور  
جمهورى قاطبه سنك راي زرين احديت قرينكه تفويض قلنمقله ناحيه



Գործը վերջին աստիճանի մինչև հասնելու համար անհրաժեշտ է համարել արևելյան Հայաստանի քաղաքացիական վերաբերյալ Թուրքիայի կառավարության հետ հարաբերությունները կարգավորելու և հարկերի մասին համաձայնագրի կնքման համար պայմաններ ստեղծելու համար։

Այս պայմաններում հարկերի մասին համաձայնագրի կնքումը կարևորագույն խնդիր է համարվում։ Ինչպես արդեն ասվեց, Թուրքիայի կառավարությունը հարկերի մասին համաձայնագրի կնքումը համարում է իր արևելյան Հայաստանի վերաբերյալ քաղաքական և տնտեսական քաղաքական քայլերի շարժման հիմնական կետը։

Թուրքիայի կառավարությունը հարկերի մասին համաձայնագրի կնքումը համարում է իր արևելյան Հայաստանի վերաբերյալ քաղաքական և տնտեսական քաղաքական քայլերի շարժման հիմնական կետը։

Թուրքիայի կառավարությունը հարկերի մասին համաձայնագրի կնքումը համարում է իր արևելյան Հայաստանի վերաբերյալ քաղաքական և տնտեսական քաղաքական քայլերի շարժման հիմնական կետը։

Թուրքիայի կառավարությունը հարկերի մասին համաձայնագրի կնքումը համարում է իր արևելյան Հայաստանի վերաբերյալ քաղաքական և տնտեսական քաղաքական քայլերի շարժման հիմնական կետը։

Թուրքիայի կառավարությունը հարկերի մասին համաձայնագրի կնքումը համարում է իր արևելյան Հայաստանի վերաբերյալ քաղաքական և տնտեսական քաղաքական քայլերի շարժման հիմնական կետը։

خدیوانه می جمله سنه اشاعت و اعلان و فیما بعد ظل و ربق پادشاهانه  
 مده من کل الوجوه محمی الاطراف اولاجقلمین صغیر و کبیر و وضع و  
 رفیعنه افاده و ابتداده و حالا متصرف اولدقلزی املاک و اراضیلرینی  
 یدلرنده ابقا و تقریر ایلایوب بیون سبحانه تعالی اوامر خطیر  
 صورت حسن نظام افراغ ایتمکده حدیاتی و هر حالده فقرا و ضعفای  
 حمایت و صیانت ایله قیام فر و شوکت ملوکانه و دوام عمر و دولت  
 پادشاهانه استجاب دعوات خیرییه ایلمکده تقید و اهتمام ایلمکی  
 باینده فرمان عالیشانم صادر اولمشدر بیوردمکی \*

فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

[امضاء]

تذکره امر داده

محاسبه دین

فی ۲۹ رمضان سنه ۱۱۳۵

وجه مشروح اوزره باش محاسبه دین جزیه قلمنه قائمه ویرلمک

اوزره باش محاسبه قیدایله باشقه یازوایله یازیله \*

А. Д. ПАПАЗЯН

## НОВЫЕ МАТЕРИАЛЫ О НАЛОГОВОЙ ПОЛИТИКЕ ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

### Резюме

В Тифлисском фонде Восточного отделения Народной библиотеки в Кириллы и Мефедия в Болгарии хранятся три османских документа 1723 г. Первый из них является утвержденным в Шариатском присутствии при штабе командующего двигающихся в направлении Тифлиса османских войск Ибрагима-паши соглашением. Второй документ—репорт, представленный на основании этого соглашения из дворцового дивана султану Ахмеду III, а третий—указ султана, датированный Ибрагим-паше.

Документы рассказывают о том, что 4 июня 1723 г. в лагерь османских войск направлявшихся в Тифлис, явились старейшины (кезхуди) 31 армянского селения переименованной в Кайгули провин-



ция Ашоцк (область Гугарк исторической Армении), входящей в этот период в подвластное Сефевидскому Ирану валийство Восточная Грузия и, выразив подданство, сумели предотвратить набег и грабеж своих областей. Взамен «добровольного» принятия подданства, уплатив лишь по размерам поголовную подать (джизью), указанные селения были освобождены на три года от других поземельных налогов.

Публикуя в приложении к статье турецкий текст и армянский перевод двух документов (протокола Шариатского присутствия и султанского указа), мы показываем на основании параллельного анализа других архивных материалов, грабительский характер налоговой политики Турции и соответствующие способы взимания налогов в Закавказье в 1723—1736 гг. турецкими оккупационными властями.

A. D. PAPAŽIAN

## NOUVEAUX DOCUMENTS SUR LA POLITIQUE D'IMPOSITION DES AUTORITES TURQUES EN ARMENIE ORIENTALE

### Résumé

Le Fonds de Tiflis du Département oriental de la Bibliothèque Nationale Cyrille et Méthode de Bulgarie conserve trois documents ottomans de 1723. Le premier est un accord confirmé en lieu public du Chariat près l'état-major du commandant des troupes ottomanes d'Ibrahim-pacha se dirigeant vers Tiflis. Le second document est un rapport présenté, en se basant sur l'accord mentionné, par la chancellerie du palais au sultan Ahmed III, le troisième, un ordre du sultan adressé à Ibrahim-pacha.

Ces documents témoignent que le quatre juin 1723, le camp des troupes ottomanes en route pour Tiflis reçut la visite des doyens (katkhoudas) de 31 villages arméniens de la province d'Achotzk, nommé Kayghouli par les Ottomans (région de Gougark de l'Arménie historique), qui faisait partie à cete époque du vilayet de la Géorgie orientale soumise à l'Iran Séfévide qui, ayant fait acte de soumission, réussirent à prévenir le pillage de leurs régions. En récompense de cette soumission „volontaire“ et ayant seulement payé une capitation (djizzia) modérée es villages mentionnés furent libérés pour trois ans des autres impôts, fonciers.

En publiant en appendice à l'article le texte turc et la traduction arménienne de deux documents (le protocole du lieu public du Chariat et l'ordre du sultan), nous montrons, par l'analyse parallèle d'autres documents d'archives, le caractère inhumain de la politique d'imposition de la Turquie et les procédés de levée des impôts en Transcaucasie par les autorités d'occupation turques aux années 1723—1736.